«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԼՃԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ Ա. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ. Լճաշեն, 24փ. 1-ին նրբ, շենք 3, էլ. փոստ՝Lchashen@schools.am

N: 327
<< 03 >> 11. 2021թ.

հեռ. (0-261) 2-70-82.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Սարգսյան

Տեղեկացնում եմ Ձեզ այն մասին, որ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղի Ա.Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման հավելվածով հաստատված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգ>>-ի 2-րդ,3-րդ,4-րդ կետերի պահանջներով, 2021 թվականի նոյեմբերի 2-ի №3 նիստում որոշում է ընդունել հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:

Խնդրում եմ Ձեր միջնորդությունը մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը 2021թվականի նոյեմբերի 4-ին հրապարակել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում:

Կից ներկայացվում է դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 3 նիստի որոշման պատճենը և հաստատության տնօրենի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը:

Առդիր 3 թերթ:

Հարգանքներով՝

Խորհրդի նախագահ՝ Արամ Մուրադյան

ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԵՆԸ

<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ Ա.ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2 -ի N:3 ՆԻՍՏԻ

<< ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ Ա.ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկուցող՝ խորհրդի նախագահ Արամ Մուրադյան/

Հաստատության կառավարման խորհրդի նախագահ Արամ Մուրադյանը խորհրդին ներկայացրեց, որ ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 27-ի N:1380-Ն որոշմամբ հաստատվել է <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 մարտի 4-ի N:319-Ն որոշման մեջ փոփոխություն • կատարելու մասին>> <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը>>, որն ուժի մեջ է մտել 2021 թվականի օգոստոսի 28-ից:

Կարգի նոր կարգավորմամբ 2-րդ կետով սահմանվում է, որ <<Հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, տվյալ հաստատության տնօրենի պաշտոնավարման ժամկետը լրանալու օրվանից հաշված, առավելագույնը 70 աշխատանքային օր առաջ, բայց ոչ պակաս 66 աշխատանքային օր առաջ ընդունում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին որոշում>>:
Վերոնշյալ կետը կիրառվում է միայն այն դեպքում, երբ գործող տնօրենի պաշտոնավարման ժամկետը լրանում է 2021 թվականի դեկտեմբերի 1-ից հետո:
<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղի Ա.Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրեն Աիդա Մուրադյանի և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի միջև կնքված N:461 աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանում է 2022 թվականի փետրվարի 8-ին, ուստի վերոհիշյալ կարգով պետք է կազմակերպել և անցկացնել տնօրենի թափուր տեղի մրցույթը և կիրառել մրցույթի հայտարարման պահին գործող օրենսդրական կարգավորումները:
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 մարտի 4-ի N:319-Ն որոշմամբ հաստատված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի>> 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի և <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղի Ա.Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աիդա Մուրադյանի միջև 08.02.2017թ. կնքված N:461 աշխատանքային պայմանագիրը, հաստատության կառավարման խորհուրդը, տնօրենի պաշտոնավարման ժամկետը լրանալու օրվանից՝ 2022 թվականի փետրվանի 8-ից հաշված, առավելագույնը 70 աշխատանքային օր առաջ, բայց ոչ պակաս 66 աշխատանքային օր առաջ պետք է ընդունի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին որոշում: Խորհրդի նախագահն այդ որոշման պատճենը և մրցույթն անցկացնելու մասին հայտարարությունը, համաձայն ձևի, որոշում կայացնելու օրվանից հետո առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ներկայացնում է կրթության պետական կառավարման լիազորված մարմին՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարություն և ՀՀ Գեղարքունիքի մարզպետին, մրցույթն անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակվում է www.azdarar.am կայքում ՀՀ կառավարության 17.02.2021թ. N:174-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ ԿԳՄՍ Նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում և ՀՀ

Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում ներկայացվելուց հետո՝ առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Ղեկավարվելով <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 13-րդ կետերի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մարտի 4-ի N:319-Ն որոշման հավելվածով հաստատված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի>> 2-րդ, 3-րդ, 4-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝ կառավարման խորհուրդը որոշում է՝

1. <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղի Ա.Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար ս/թ նոյեմբերի 4-ից հայտարարել մրցույթ:
2. Հաստատել կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի պաշտոնի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարության տեքստը՝ համաձայն ձևի/կցվում է/:
3. Հանձնարարել խորհրդի նախագահ Արամ Մուրադյանին՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթ հայտարարելու մասին խորհրդի որոշման պատճենը և մրցույթն անցկացնելու մասին հայտարարությունը՝ համաձայն ձևի, առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ներկայացնել կրթության պետական կառավարման լիազորված մարմին:
4. Մրցույթն անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակել www.azdarar.am կայքում ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N:174-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ ԿԳՄՍ նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում ներկայացվելուց հետո առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում:
5. Տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի հայտերն ընդունել դպրոցում, 2021 թվականի նոյեմբերի 4-24-ը ներառյալ, ամեն օր ժամը 10^{00}-ից մինչև 15^{00}:
6. Լիազորել կազմակերպության կառավարման խորհրդի անդամներ Քրիստինե Շհոյանին և Հրանուշ Վարդանյանին ընդունել հավակնորդների հայտերը:
7. Մրցույթն անցկացնել դպրոցում, համակարգչային կաբինետում, 2021 թվականի դեկտեմբերի 8-ին, ժամը 12^{00} – ին:
8. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՐԱՄ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՔՐԻՍՏԻՆԵ ՇՀՈՅԱՆ

Մրցույթի հայտարարություն

<<<< Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղի Ա.Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի

տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

04.11.2021թ.

<< կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝

<<<< Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղի Ա.Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) << քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի՝ հավաստագրի պատճենը

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են << << Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղի Ա.Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում, 2021 թվականի նոյեմբերի 4-ից մինչև նոյեմբերի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00}-ից մինչև ժամը 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի դեկտեմբերի 8-ին, ժամը 12:00-ին, <<<< Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղի Ա.Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում, հասցեն՝ գյուղ Լճաշեն, 24-րդ փողոց, 1-ին նրբանցք, № 3 շենք:

Տեղեկությունների համար դիմել՝

Քրիստինե Շհոյան՝հեռ.098-30-88-02,էլ. հասցե- kristineshhoyan@gmail.com

Հրանուշ Վարդանյան՝ հեռ.077-91-75-55, էլ. հասցե- vardanyan_hranush88@mail.ru